

**ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ**

**«Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին»
օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի
(փաստաթղթային կոդ՝ Կ-992-24.12.2024-ԱՍ-011/0) և «Պետական նպաստների մասին»
օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի
(փաստաթղթային կոդ՝ Կ-992¹-24.12.2024-ԱՍ-011/0) վերաբերյալ**

Կառավարության կողմից օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացված «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-992-24.12.2024-ԱՍ-011/0) և «Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը (փաստաթղթային կոդ՝ Կ-992¹-24.12.2024-ԱՍ-011/0) (այսուհետ միասին՝ Նախագծերի փաթեթ) մասնագիտական փորձաքննության են ենթարկվել Ազգային ժողովի աշխատակազմի փորձագիտական և վերլուծական վարչությունում:

Նախագծերի փաթեթը ենթարկվել է իրավական, ֆինանսատնտեսագիտական, սոցիալական փորձաքննության:

Ստորև ներկայացվում է մասնագիտական փորձաքննության եզրակացությունը, ինչպես նաև Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին տեղեկանքը:

Իրավական փորձաքննության արդյունքները

Նախագծերի փաթեթի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և օրենքների պահանջներին համապատասխանության տեսանկյունից նշենք հետևյալը.

1. «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) 6-րդ հոդվածի 1-ին կետով «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 12-րդ մասում «առաջանալու օրվա» բառերից հետո առաջարկում ենք լրացնել «դրությամբ» բառը, իսկ 16-րդ մասում «6-րդ մասերով» բառերից հետո «սահմանված» բառը՝ մտքի արտահայտման իմաստային ամբողջականությունն ապահովելու նպատակով:

2. Նախագծի 6-րդ հոդվածի 2-րդ կետով Օրենքի 22-րդ հոդվածում լրացվող նոր՝ 18-րդ մասում հղում է կատարվում նույն հոդվածի «15.17-րդ» մասերին: Առաջարկում ենք «15.17-րդ» ձևակերպումը փոխարինել «15-17-րդ» ձևակերպմամբ, եթե հղում է կատարվում 15-ից 17-րդ մասերին, իսկ եթե հղումը վերաբերում է միայն 15-րդ և 17-րդ մասերին, ապա մասերի համարները միմյանցից բաժանել ստորակետով կամ «և» շաղկապով:

3. Նախագծի 7-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն. « 1. Բացառությամբ սույն հոդվածի 18-րդ մասում նշված դեպքի, նպաստը նշանակում և հաշվարկում է լիազոր մարմինը՝ հիմք ընդունելով հետևյալ տեղեկատվությունը (տվյալները)՝

(...)

6) **Կառավարության սահմանած դեպքերում՝ նաև քաղաքացու դիմումը:**»:

Հարկ ենք համարում նշել, որ նշված կետում ամրագրված դրույթը խնդրահարույց է իրավական որաշակիության տեսանկյունից: Քաղաքացու կողմից դիմումի ներկայացման դեպքը սահմանված է Նախագծի 9-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 26-րդ հոդվածի 1-ին մասում, որը նախատեսում է անձի մահվան դեպքում նպաստի նշանակման, հաշվարկման և վճարման նպատակով մահացածի ընտանիքի անդամի կողմից դիմում ներկայացնելու վերաբերյալ իրավադրույթ: Այսպես՝ դիմում ներկայացնելու դեպքը սահմանված է օրենքով: Ուստի այդպիսի դիմումները հաշվի առնելու դեպքերի շրջանակի սահմանումը Կառավարության կողմից հասկանալի չէ: Հիմք ընդունելով

վերոգրյալն՝ առաջարկում ենք ապահովել Նախագծի 7-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 24-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետում սահմանված դրույթի իրավական որակակիությունը, որպեսզի հասցեատեր սուբյեկտները կարողանան դրսևորել համապատասխան վարքագիծ:

4. Նախագծի 7-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 24-րդ հոդվածում նախատեսված են նպաստը նշանակելու և վճարելու վերաբերյալ իրավակարգավորումներ, որի 4-րդ մասի համաձայն. *«4. Ժամանակավոր անաշխատունակության վերջին օրվա (ժամանակավոր անաշխատունակության թերթիկը փակելու) վերաբերյալ տեղեկատվությունը լիազոր մարմնից ստանալուց հետո՝ 1 աշխատանքային օրվա ընթացքում հարկային մարմինը նախորդ օրվա դրությամբ առկա՝ նպաստը հաշվարկելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը տրամադրում է լիազոր մարմնին:»*

Հարկ ենք համարում նշել, որ Նախագծի 7-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 24-րդ հոդվածի 3-րդ մասում սահմանված է միայն **վարձու աշխատողի** ժամանակավոր անաշխատունակության առաջին և վերջին օրերի վերաբերյալ տեղեկատվության տրամադրումը լիազոր մարմնին էլեկտրոնային առողջապահության համակարգի միջոցով, որն էլ լիազոր մարմինը հարկային մարմնի միջոցով ուղարկում է վարձու աշխատողի գործատուին: Նախագծում բացակայում է ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի ժամանակավոր անաշխատունակության առաջին և վերջին օրերի վերաբերյալ տեղեկատվությունը լիազոր մարմնին տրամադրելու, ինչպես նաև այդ տեղեկատվությունը լիազոր մարմնի կողմից հարկային մարմնին փոխանցելու վերաբերյալ իրավակարգավորումներ: Ինչը խնդրահարույց է այն տեսանկյունից, որ հարկային մարմինն ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձանց նպաստը հաշվարկելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը ևս պետք է տրամադրի լիազոր մարմնին՝ ժամանակավոր անաշխատունակության վերջին օրվա վերաբերյալ տեղեկատվությունը լիազոր մարմնից ստանալուց հետո: Նախագծի 7-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 7-րդ մասում սահմանված իրավադրույթից բխում է, որ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի նպաստը հաշվարկելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը լիազոր մարմինը ստանում է հարկային մարմնից:

Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք Նախագծում ապահովել նպաստի նշանակման և վճարման ընթացակարգի վերաբերյալ կարգավորումների ամբողջականությունը:

5. Նախագծի 7-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 24-րդ հոդվածի 14-րդ մասի համաձայն. «14. *Օտարերկրյա պետության բժշկական հաստատության տված՝ անձի ժամանակավոր անաշխատունակ լինելը հաստատող փաստաթղթի հիման վրա անձի ժամանակավոր անաշխատունակության վերաբերյալ տեղեկատվությունը (տվյալները) էլեկտրոնային առողջապահության համակարգ է ներառվում առողջապահության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի տված թույլտվության հիման վրա՝ Կառավարության սահմանած կարգով:*»:

Նախագծում բացակայում են առողջապահության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից տրվող թույլտվության վերաբերյալ այլ իրավակարգավորումներ: Մասնավորապես՝ Նախագծում ամրագրված չեն քննարկվող թույլտվության տրամադրման, ինչպես նաև մերժման հիմքերը: Կարծում ենք՝ առողջապահության ոլորտի պետական կառավարման լիազոր մարմնի կողմից տրվող թույլտվության վերաբերյալ առնվազն նվազագույն իրավակարգավորումները պետք սահմանվեն օրենքով, իսկ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի կարգավորման դաշտում մնան միայն ընթացակարգային հարցերը:

6. Նախագծի 9-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 26-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն. «1. *Անաշխատունակության ժամանակահատվածի առաջին օրվա վերաբերյալ տեղեկատվություն ստանալուց հետո՝ մինչև նպաստ նշանակելը վարձու աշխատողի, ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի մահվան դեպքում նպաստը նշանակվում, հաշվարկվում և վճարվում է մահացողի ընտանիքի անդամին (ամուսնուն, ծնողին, գավակին, 14 տարեկան և դրանից բարձր տարիքի անչափահաս երեխային, Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալներով աշխատողի մահվան օրվա դրությամբ նրա հետ նույն վայրում (հասցեում) համատեղ հաշվառված անձին)՝ դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը անձի մահվան օրվանից հետո՝ վեցամսյա ժամկետում լիազոր մարմին ներկայացնելու դեպքում: Վեցամսյա ժամկետը լրանալուց հետո չվճարված նպաստի գումարը վճարվում է ժառանգության վկայագրի հիման վրա:*»:

Մեջբերված դրույթում «ընտանիքի անդամ» հասկացությունը բացահայտվում է որպես «ամուսնին, ծնող, զավակ, 14 տարեկան և դրանից բարձր տարիքի անչափահաս երեխա, Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալներով աշխատողի մահվան օրվա դրությամբ նրա հետ նույն վայրում (հասցեում) համատեղ հաշվառված անձ»: Հարկ ենք համարում նշել, որ «զավակ» եզրույթը սուբյեկտների լայն շրջանակ է ընդգրկում, և ներառում է ինչպես մինչև 14 տարեկան անչափահաս երեխաներին, այնպես էլ 14 տարեկան և դրանից բարձր անչափահաս և չափահաս անձանց: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք վերանայել «ընտանիքի անդամ» հասկացության «զավակ, 14 տարեկան և դրանից բարձր տարիքի անչափահաս երեխա» բացահայտող եզրույթները՝ բացառելով դրույթի տարրներցումները և ներքին հակասությունը: Եթե այսպիսի ձևակերպման նպատակը մինչև նպաստ նշանակելը վարձու աշխատողի, ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի մահվան դեպքում մահացողի ընտանիքի անդամ հանդիսացող մինչև 14 տարեկան անչափահաս երեխային նպաստի նշանակման, հաշվարկման և վճարման սահմանափակումն է, ապա անհրաժեշտություն է առաջանում վերանայման արդյունքում նշել այդ մասին:

Բացի այդ, Նախագծի 9-րդ հոդվածով Օրենքի նոր խմբագրությամբ շարադրվող 26-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված դրույթը խնդրահարույց է իրավական որոշակիության տեսանկյունից: Մասնավորապես՝ Նախագծով կարգավորված չէ մահացողի ընտանիքի անդամ հանդիսացող մի քանի սուբյեկտների կողմից միաժամանակ ներկայացված դիմումներին առաջնահերթության տալու կարգը: Ուստի առաջարկում ենք Նախագծով սահմանել մահացողի ընտանիքի անդամ հանդիսացող սուբյեկտների առաջնահերթության վերաբերյալ դրույթներ, որպեսզի հասեցատեր սուբյեկտները կարողանան դրսևորել համապատասխան վարքագիծ:

Նույն դիտարկումները վերաբերելի են նաև «Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով «Պետական նպաստների մասին» օրենքի 23.1-ին հոդվածում լրացվող նոր՝ 4.1-ին մասին:

7. Նախագծի 9-րդ հոդվածով Օրենքում նոր խմբագրությամբ շարադրվող 27-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված դրույթով հարկային մարմին ներկայացվում են գրանցման հայտ կամ հաշվարկ (այդ թվում՝ ճշտված): Մինչդեռ նույն հոդվածի 7-րդ մասում նշում է կատարվում հարկային մարմին ներկայացված գրանցման հայտի և միայն ճշտված

հաշվարկի մասին: Եթե Նախագծի նշված երկու դրույթներով հարկային մարմնին ներկայացվող հաշվարկների շրջանակը նույն է, ապա առաջարկում ենք միևնույն միտքն արտահայտելիս կիրառել միևնույն բառերը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 2-րդ մասում սահմանված դրույթը, որի համաձայն. *«Նորմատիվ իրավական ակտում միևնույն միտքն արտահայտելիս կիրառվում են միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ.»*:

8. Նախագծի 12-րդ հոդվածում առաջարկում ենք «ենթաօրենսդրական» բառից հետո լրացնել «նորմատիվ» բառը՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում սահմանված հասկացությունը, այն է. *«3) ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտ՝ Սահմանադրության և օրենքների հիման վրա և դրանց իրականացումն ապահովելու նպատակով օրենքով լիազորված լինելու դեպքում Սահմանադրությամբ նախատեսված մարմինների ընդունած նորմատիվ իրավական ակտ.»*: Սույն առաջարկը բխում է «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում սահմանված իրավադրույթից, որի համաձայն. *«1. Նորմատիվ իրավական ակտում կիրառվում են նորմատիվ իրավական ակտերով սահմանված կամ հանրաժանոթ հասկացություններ կամ տերմիններ.»*:

Նույն առաջարկը վերաբերելի է նաև «Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 4-րդ հոդվածում կիրառված «ենթաօրենսդրական իրավական ակտն» բառերին:

9. «Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետով «Պետական նպաստների մասին» օրենքի 23.2-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 1-ին մասի համաձայն. *«1. Չաշխատող անձին (այդ թվում՝ սույն օրենքի 23.1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում նշված անձին), իսկ սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքում՝ նրա ընտանիքի անդամին մայրության նպաստ նշանակվում է (անձը ձեռք է բերում մայրության նպաստ ստանալու իրավունք) մայրության նպաստի իրավունք ունեցող անձի հղիության և ծննդաբերության (ժամանակավոր անաշխատունակության մեջ գտնվելու) վերաբերյալ տեղեկատվությունը (տվյալները) էլեկտրոնային առողջապահության համակարգից ստանալուց, իսկ սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասում նշված դեպքում՝ դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը տարածքային կենտրոն ներկայացվելուց հետո՝ մեկամսյա ժամկետում.»*:

Վերոնշյալ դրույթից բխում է, որ «Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով «Պետական նպաստների մասին» օրենքի 23.1-ին հոդվածում լրացվող նոր՝ 4.1-ին մասում նախատեսված դեպքում դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացվում են տարածքային կենտրոն: Մինչդեռ «Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով «Պետական նպաստների մասին» օրենքի 23.1-ին հոդվածում լրացվող նոր՝ 4.1-ին մասում սահմանված իրավակարգավորմամբ դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը նպաստ նշանակելու և վճարելու նպատակով ներկայացվում է լիազոր մարմնին: Հարկ է նկատել, որ «Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծով սահմանված չէ լիազոր մարմնի կողմից քննարկվող դիմումի և անհրաժեշտ փաստաթղթերի փոխանցման կարգը տարածքային կենտրոն: Հետևաբար նպաստի նշանակման և վճարման համար համապատասխան դիմումի և անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման համար տարբեր դրույթներով սահմանված են երկու տարբեր մարմիններ: Որպեսզի հասցեատեր սուբյեկտները կարողանան դրսևորել համապատասխան վարքագիծ առաջարկում ենք վերանայել «Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագիծը ներքին հակասությունը բացառելու նպատակով:

10. «Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ կետով «Պետական նպաստների մասին» օրենքի 23.2-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 3-րդ մասի 3-րդ կետի համաձայն. *«3. Չաշխատող անձին, իսկ սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքում՝ նրա ընտանիքի անդամին մայրության նպաստ նշանակելու և վճարելու համար հիմք են հանդիսանում՝*

(...)

3) Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեզիստրում առկա սովյալները՝ հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու առաջին օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության բնակչության վայրի հասցեով հաշվառում ունենալու վերաբերյալ. (...):»:

Հարկ ենք համարում նշել, որ «Պետական նպաստների մասին» օրենքի 23.1-ին հոդվածի 5-րդ մասում սահմանված է. *«5. Օտարերկրյա քաղաքացի՝ չաշխատող անձին*

*մայրության նպաստ նշանակվում է, եթե նա հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ **առնվազն երեք տարի** անընդմեջ հաշվառված է Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով»:*

Այսպես՝ օտարերկրյա քաղաքացի՝ չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու համար անհրաժեշտ են նաև Հայաստանի Հանրապետության պետական ռեգիստրում առկա տվյալներից՝ անձի հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ առնվազն երեք տարի անընդմեջ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով հաշվառված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը:

Հիմք ընդունելով վերոգրյալն՝ կարծում ենք՝ օտարերկրյա քաղաքացի՝ չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու համար անհրաժեշտ՝ առաջին օրվա դրությամբ առնվազն երեք տարի անընդմեջ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով հաշվառված լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ևս պետք է սահմանվի չաշխատող անձին մայրության նպաստ նշանակելու համար հիմք հանդիսացող տվյալների շարքում:

11. «Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ կետով «Պետական նպաստների մասին» օրենքի 23.2-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 3-րդ մասի 5-րդ կետում սահմանված է. *«3. Չաշխատող անձին, իսկ սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասով սահմանված դեպքում՝ նրա ընտանիքի անդամին մայրության նպաստ նշանակելու և վճարելու համար հիմք են հանդիսանում՝*

(...)

*5) **Կառավարության սահմանած դեպքերում՝** սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասում նշված՝ մահացողի ընտանիքի անդամի կողմից ներկայացված դիմումը և կից փաստաթղթերը»:*

Հարկ ենք համարում նշել, որ «Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով «Պետական նպաստների մասին» օրենքի 23.1-ին հոդվածում լրացվող նոր՝ 4.1-ին մասում սահմանված իրավակարգավորմամբ՝ մինչև մայրության նպաստ նշանակելը կամ վճարելը անձի մահվան դեպքում նպաստը նշանակելու և վճարելու կամ նպաստը նշանակելուց հետո

մահվան պատճառով չվճարված նպաստի գումարը վճարելու համար հիմք հանդիսացող պայմանը, այն է՝ մահացողի ընտանիքի անդամի կողմից դիմումը և անհրաժեշտ փաստաթղթերը լիազոր մարմնին ներկայացնելը, սահմանված է օրենքով: Նշված դրույթը չի առանձնացնում համապատասխան դիմումը և կից փաստաթղթերը ներկայացնելու որոշակի դեպքերի շրջանակ, և որևէ հնարավորություն չի ընձեռում ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտով այդպիսի դեպքերի սահմանման: Ուստի հասկանալի չէ՝ մայրության նպաստ նշանակելու և վճարելու համար հիմք հանդիսացող տվյալների շարքում մահացողի ընտանիքի անդամի կողմից ներկայացված դիմումը և կից փաստաթղթերն ինչու են պայմանավորվում Կառավարության կողմից սահմանվող դեպքերով: Հիմք ընդունելով վերոգրյալն՝ առաջարկում ենք վերանայել «Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 4-րդ կետով «Պետական նպաստների մասին» օրենքի 23.2-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 3-րդ մասի 5-րդ կետում սահմանված դրույթը՝ համապատասխանեցնելով այն «Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 1-ին հոդվածի 2-րդ կետով «Պետական նպաստների մասին» օրենքի 23.1-ին հոդվածում լրացվող նոր՝ 4.1-ին մասում սահմանված իրավակարգավորմանը:

12. «Պետական նպաստների մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի 2-րդ հոդվածի 5-րդ կետով «Պետական նպաստների մասին» օրենքի 23.2-րդ հոդվածի նոր խմբագրությամբ շարադրվող 4-րդ մասի 5-րդ կետի համաձայն. «4. Տարածքային կենտրոնը սույն օրենքի 23.1-ին հոդվածի 4.1-ին մասում նշված դեպքում մերժում է մայրության նպաստ նշանակելու դիմումը, եթե՝

(...)

5) չաշխատող անձը հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու առաջին օրվա դրությամբ չի ունեցել Հայաստանի Հանրապետության բնակության վայրի հասցեով հաշվառում»:

Հիմք ընդունելով «Պետական նպաստների մասին» օրենքի 23.1-ին հոդվածի 5-րդ մասում սահմանված պայմանը, այն է՝ օտարերկրյա քաղաքացի՝ չաշխատող անձի հղիության և ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի առաջին օրվա դրությամբ առնվազն երեք տարի անընդմեջ Հայաստանի Հանրապետությունում բնակության վայրի հասցեով հաշվառված լինելու հանգամանքը,

առաջարկում ենք մայրության նպաստ նշանակելու դիմումի մերժման հիմքերում հաշվի առնել նաև օտարերկրյա քաղաքացի՝ չաշխատող անձանց վերաբերյալ օրենքով նախատեսված պահանջները:

Եզրահանգում

Ամփոփելով փորձաքննության արդյունքները՝ կարող ենք նշել, որ Նախագծերի փաթեթով սահմանված կարգավորումները կարող են խնդրահարույց լինել իրավական որոշակիության տեսանկյունից:

Միաժամանակ, ներկայացված առաջարկությունների հիման վրա, անհրաժեշտ է ապահովել Նախագծերի փաթեթով սահմանված իրավակարգավորումների ամբողջականությունը, համապատասխանությունը միմյանց, «Պետական նպաստների մասին» օրենքին և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքին:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ՋԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍՍԱՓՅԱՆ

Կատարող՝ Ն. Ներսիսյան (հեռ.՝ 011-513-248)

14.01.2025թ.

ՏԵՂԵԿԱՆՔ

Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտության բացակայության մասին

Նախագծերի փաթեթին առնչվող այլ օրենքի կամ Ազգային ժողովի որոշման ընդունման անհրաժեշտությունը բացակայում է:

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԻՐԱՎԱԿԱՆ

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ՋԵՄՖԻՐԱ ՀՈՎԱՍՍԱՓՅԱՆ

Կատարող՝ Ն. Ներսիսյան (հեռ.՝ 011-513-248)

14.01.2025թ.

Ֆինանսատնտեսագիտական փորձաքննության արդյունքները

Նախագծերի փաթեթով (այսուհետ՝ Փաթեթ) առաջարկվող իրավակարգավորումներն ուղղված են ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների նշանակման գործընթացի բարելավմանը և հասցեականության ապահովմանը:

Փաթեթում ընդգրկված «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի (այսուհետ՝ Նախագիծ) վերաբերյալ հարկ ենք համարում ներկայացնել հետևյալ նկատառումները:

1. Գործող իրավակարգավորումների համաձայն՝ մայրության նպաստը հաշվարկվում է օրացուցային օրերով, իսկ ժամանակավոր անաշխատունակության նպաստը՝ աշխատանքային օրերով: Նախագծով, նպաստների հաշվարկման միանման մոտեցում ապահովելու նպատակով, առաջարկվում է ժամանակավոր անաշխատունակության նպաստը նույնպես հաշվարկել օրացուցային օրերով: Մասնավորապես, «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքի (այսուհետ՝ Օրենք) 22-րդ հոդվածի 13-րդ մասի համաձայն, հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող մեծությունը բաժանվում է 21-ի (վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ 25-ի) և բազմապատկվում ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի առաջին աշխատանքային օրվանից սկսած աշխատանքային օրերի թվով (այս դեպքում միջին օրական աշխատավարձի չափը որոշվում է այնպես, ինչպես Աշխատանքային օրենսգրքի 195-րդ հոդվածի 3-րդ մասով): Նախագծով առաջարկվում է ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող մեծությունը բաժանել 30.4-ի (մեկ ամսվա միջին օրերի թվի) վրա (տես Նախագծի 6-րդ հոդվածը): Այսինքն, առաջարկվում է ժամանակավոր անաշխատունակության համար վճարվող օրերի թիվն ավելացնել՝ դրանում ներառելով նաև ոչ աշխատանքային, այդ թվում՝ նաև շաբաթ և կիրակի օրերը:

Տվյալ Նախագծի առումով շատ կարևոր է նշել, որ Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ժամանակավոր անաշխատունակության նպաստի միջոցով **մասնակիորեն**

փոխհատուցվում է սահմանված անձանց ժամանակավոր անաշխատունակության հետևանքով կորցրած աշխատավարձը (եկամուտը), որն անձը ստանում էր կամ կարող էր ստանալ:

Իսկ Աշխատանքային օրենսգրքի 178-րդ հոդվածի 1-ին մասով սահմանվում է, որ աշխատավարձն օրենքով, իրավական այլ ակտերով սահմանված կամ աշխատանքային պայմանագրով նախատեսված **աշխատանքները կատարելու դիմաց** աշխատողին վճարվող հատուցումն է: Այսինքն, նշվածից հետևում է, որ մի կողմից Նախագծի 6-րդ հոդվածով առաջարկվող իրավակարգավորումը հակասում է Օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասին, իսկ մյուս կողմից՝ վարձու աշխատողը պետք է փոխհատուցում ստանա նաև այն օրերի համար, որի համար աշխատավարձ ընդհանրապես նախատեսված չի եղել (և, բնականաբար, կորցրած աշխատավարձ (եկամուտ) չէր կարող ձևավորվել): Հետևաբար, գոյություն չունեցող վարձատրության դիմաց գործատուի համար մասնակի փոխահուցման պարտականության սահմանումը ոչ միայն տրամաբանական չէ (այդ դեպքում կստացվի, որ վարձու աշխատողը վարձատրվում է նաև ոչ աշխատանքային օրերի համար), խաթարում է աշխատանքի վարձատրության և, այդ համատեքստում՝ նաև ժամանակավոր անաշխատունակության համար փոխհատուցման գաղափարը և դրա տնտեսագիտական էությունը, այլև լրացուցիչ և անհիմն ֆինանսական բեռ է առաջացնում գործատուի համար:

2. Նախագծով առաջարկվում է ժամանակավոր անաշխատունակության նպաստը նույնպես հաշվարկել օրացուցային օրերով՝ առաջին 7 օրացուցային օրվա (գործող՝ 5 աշխատանքային օրվա փոխարեն) համար՝ գործատուի միջոցներից, իսկ մնացած ժամանակահատվածը՝ պետական բյուջեի միջոցներից: Առաջարկվող փոփոխությունն, առաջին հայացքից, ներկայանում է դրական լույսի ներքո՝ այն առումով, որ ժամանակավոր անաշխատունակության հետևանքով փոխհատուցվող օրերի թիվը և տրամադրվող փոխհատուցման գումարն ավելանում են և աշխատողների սոցիալական պաշտպանվածության մակարդակն ավելի է բարձրանում: Սակայն առաջարկվող նոր մոտեցումների խորը վերլուծությունը ցույց է տալիս, որ այդ եզրահանգումները չափազանցված են, եթե չասենք՝ ճիշտ հակառակ վիճակն են նկարագրում:

Խնդիրը կայանում է նրանում, որ փոխհատուցման օրերի թվի ավելացումը (5 օրից դարձնելով 7 օր) միջին օրական աշխատավարձի հաշվարկի մասով տանում է դրա ոչ թե ավելացման, այլ նվազեցման: Առաջարկվող փոփոխությունների վերլուծության արդյունքում կարող ենք արձանագրել հետևյալը:

1) Նախ՝ ավելացնելով փոխհատուցման ենթակա օրերի թիվը, դրանով իսկ ավելանում է գործատուի (այդ թվում նաև՝ պետության) ֆինանսական բեռը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ժամանակավոր անաշխատունակության օրերի թիվը, որպես կանոն, հիմնականում կազմում է 3-5 օր: Բացի այդ, որոշակի դեպքերում, եթե փոխհատուցման ենթակա օրերի թվում ներառված կլինեն նաև ոչ աշխատանքային (շաբաթ և կիրակի) օրեր, ապա անաշխատունակության նպաստի (փոխհատուցման) փաստացի չափը կլինի ավելի մեծ, քան գործող իրավակարգավորումների պարագայում: Ավելին, այս դեպքում գործատուն պարտավոր կլինի փոխհատուցել նաև այն օրերի համար, որոնց համար նախկինում չէր փոխհատուցում և այդ տեսանկյունից, առաջարկվող մոտեցումը կբերի ֆինանսական բեռի անհիմն ավելացման:

2) Մոտավորապես նույն իրավիճակը կառաջանա նաև վարձու աշխատողների մասով: Այսպես, եթե ժամանակավոր անաշխատունակության օրերի թվում ներառված լինեն նաև ոչ աշխատանքային օրեր, ապա վարձու աշխատողի համար անաշխատունակության նպաստի (փոխհատուցման) փաստացի չափը կաճի ներկայումս գործողի համեմատ, իսկ հակառակ դեպքում (երբ հաշվարկը կատարվի միայն աշխատանքային օրերի կտրվածքով)՝ կնվազի: Նշված սցենարներն ավելի ակնառու երևում են ստորև բերվող օրինակից:

		Գործող իրավակարգավորումներ	Առաջարկվող իրավակարգավորումներ
1	Ժամանակավոր անաշխատունակության օրեր	7 օրացացուցային օր (փոխհատուցում տրվում է միայն 5 աշխատանքային օրերի համար)	7 օրացուցային օր (փոխհատուցում տրվում է բոլոր օրերի համար)
2	Աշխատավարձի չափ	400.000 դրամ	400.000 դրամ

3	Միջին օրական աշխատավարձ	400.000 դրամ / 21 օր = 19.048 դրամ	400.000 դրամ / 30.4 օր = 13.158 դրամ (-5.890 դրամ)
4	Նպաստի չափը	19.048 x 5 = 95.240 դրամ	13.158 x 7 = 92.106 դրամ (-3.134 դրամ)

Ինչպես նկատում ենք աղյուսակից, Նախագծով առաջարկվող ժամանակավոր անաշխատունակության համար տրվող նպաստի հաշվարկի արդյունքում նպաստի չափը (5-ի փոխարեն 7 օր սահմանելու դեպքում) նվազում է: Սակայն հակառակ պատկերը կարձանագրվի, եթե ժամանակավոր անաշխատունակության օրերը կազմված լինեն, օրինակ, մեկ աշխատանքային և երկու ոչ աշխատանքային օրերից (այսինքն՝ անաշխատունակության թերթիկը տրվի ուրբաթ, շաբաթ և կիրակի օրերի համար): Այս դեպքում գործող կարգի համաձայն նպաստի չափը կկազմի 19.048 դրամ, իսկ առաջարկվող կարգի դեպքում՝ 39.474 դրամ (որից 20.426 դրամը գործատուի լրացուցիչ և անհիմն ֆինանսական բեռն է): Հետևաբար, անաշխատունակության նպաստի չափը ոչ միայն ընդհանուր առմամբ կնվազի, այլև կախված շաբաթվա ընթացքում անաշխատունակության օրերից՝ կտատանվի, այն էլ բավականին էական չափերով (առավելագույնը 107 տոկոսով):

3. Բացի նշվածներից, անաշխատունակության նպաստների մասով առաջարկվող իրավակարգավորումների ընդունումը կարող է հանգեցնել նաև այլ (ոչ ցանկալի) հետևանքների, մասնավորապես՝

ա) վարձու աշխատողները կձգտեն իրենց վարքագիծը համապատասխանեցնել իրենց իսկ լավագույն շահին, այն է՝ կձգտեն անաշխատունակության թերթիկը ձևակերպել այն օրերի համար, որոնց մեջ լինեն շաբաթ և կիրակի օրեր (եթե այդ օրերի թիվը փոքր լինի 7-ից), որպեսզի հնարավոր փոխհատուցումը լինի առավելագույնը, ինչն էլ կարող է իր հերթին նպաստել այս ոլորտում կոռուպցիոն սխեմաների ընդլայնմանը,

բ) վարքագծի նշված փոփոխությունը կարող է հանգեցնել ոչ միայն կոլեկտիվում անառողջ մթնոլորտի ձևավորմանը (կապված նույն քանակի օրերի համար փոխհատուցման տարբեր չափերի ստացման հետ), այլև կոլեկտիվի անդամների

առողջական վիճակի վատթարացմանը (մասնավորապես՝ եթե, օրինակ, վիրուսային հիվանդություն ունեցող աշխատակիցը մի քանի օր հիվանդ վիճակում հաճախի աշխատանքի՝ հինգշաբթի կամ ուրբաթ օրը բժշկի դիմելու համար),

գ) գործատուները կցանկանան ազատվել այս հնարավորությունները չարաշահող աշխատակիցներից՝ դրանից բխող հետևանքներով հանդերձ,

դ) ավելի «հնարամիտ» վարձու աշխատողները կարող են կոմբինավորել նշված հնարավորությունը լրացուցիչ գործոնների հետ, օրինակ՝ կարող են ձևակերպել չվճարվող արձակուրդ, իսկ դրա սկսվելուց առաջ կամ ընթացքում «հիվանդանալ» և չվճարվող արձակուրդը վերափոխել վճարովի արձակուրդի և այլն:

Եզրահանգում

Փաթեթի կազմում ընդգրկված «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի նախագիծը ֆինանսատնտեսագիտական հիմնախնդիրների տեսանկյունից վերաիմաստավորման և լրամշակման կարիք ունի՝ վերը նշված դիտողությունները հաշվի առնելու տեսանկյունից:

ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍԱՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ

ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

ԱՐԹՈՒՐ ԹԱՄԱԶՅԱՆ

կատարող՝ գլխավոր մասնագետ Գ. Կիրակոսյան

(հեռ.՝ 011 513-603)

10.01.2025թ.

Սոցիալական փորձաքննության արդյունքները

ՀՀ կառավարության կողմից ներկայացված Նախագծերի փաթեթով առաջարկվում է փոփոխություններ և լրացումներ կատարել «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում, համապատասխան լրացումներ և փոփոխություններ կատարելով նաև հարակից՝ «Պետական նպաստների մասին» օրենքում,

ինչը պայմանավորված է մինչև 2024 թվականի հունիսի 20-ը էլեկտրոնային առողջապահության համակարգի տվյալների հիման վրա Միասնական սոցիալական ծառայության կողմից մայրության նպաստի նշանակումը և վճարումն ապահովելու անհրաժեշտությամբ:

Գործող իրավակարգավորմամբ, ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստը միայն չաշխատող անձանց դեպքում է վճարում Միասնական սոցիալական ծառայությունը: Վարձու աշխատող հանդիսացող անձի մայրության և ժամանակավոր անաշխատունակության նպաստը նշանակում, հաշվարկում և վճարում է գործատուն: Մինչդեռ, գործատուի կողմից վճարված մայրության նպաստն ամբողջությամբ փոխհատուցվում է պետական բյուջեից, իսկ ժամանակավոր անաշխատունակության նպաստը՝ վեցերորդ օրվանից հետո ընկած ժամանակահատվածի համար գործատուն պետական բյուջեից ստանում է փոխհատուցում (առաջին հինգ օրերի համար գործատուն վճարում է իր միջոցներից, որը չի փոխհատուցվում), արդյունքում՝ պետական միջոցները (նպաստի տեսքով) նշանակվում և վճարվում են գործատուի կատարած հաշվարկներով, որն, ըստ հեղինակի, բավականին ռիսկային է:

Հարկ է նաև նշել, որ մայրության նպաստը հաշվարկվում է օրացուցային օրերով, իսկ ժամանակավոր անաշխատունակության նպաստը՝ աշխատանքային օրերով: Ընդ որում, ժամանակավոր անաշխատունակության նպաստ հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին աշխատավարձը հաշվարկելիս հաշվի են առնվում տվյալ վարձու աշխատողի աշխատանքային ռեժիմը, հանգստյան օրերը, հաշվարկային ժամանակահատվածում մինչև 3 տարեկան երեխայի խնամքի արձակուրդ լինելու դեպքում՝ նաև աշխատանքային պայմանագրով սահմանված աշխատավարձը: Անհրաժեշտ է հաշվի առնել, որ աշխատանքային ռեժիմի վերաբերյալ գործատուն հարկային մարմնին տեղեկատվություն չի տրամադրում, իսկ տվյալների փոխանակման ինքնաշխատ եղանակով նպաստ նշանակելիս գործընթացը դառնում է դժվար կիրառելի:

Ներկայացված Նախագծերի փաթեթով, հեղինակն առաջարկում է

- ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման (պետական բյուջեից վճարման ենթակա գումարի մասով) գործընթացն իրականացնել Միասնական սոցիալական ծառայության միջոցով *(վարձու աշխատողին, ում վերաբերող տեղեկատվությունն անաշխատունակությունն*

առաջանալու օրվա դրությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ համարվում է սահմանափակ օգտագործման ենթակա տեղեկատվություն, նպաստը հաշվարկում, նշանակում և վճարում է Կառավարության սահմանած մարմինը՝ Կառավարության սահմանած կարգով),

- ժամանակավոր անաշխատունակության նպաստը նույնպես հաշվարկել օրացուցային օրերով՝ առաջին 7 օրացուցային օրվա (գործող՝ 5 աշխատանքային օրվա փոխարեն) համար՝ գործատուի միջոցներից, իսկ մնացած ժամանակահատվածը՝ պետական բյուջեի միջոցներից,

- ժամանակավոր անաշխատունակության նպաստ հաշվարկելու համար հիմք հանդիսացող միջին ամսական աշխատավարձը հաշվարկվելու է գործող կարգով՝ հաշվարկային ժամանակահատվածում անձի ունեցած եկամուտը 12-ի բաժանելու միջոցով:

- միջին ամսական աշխատավարձը հաշվարկելիս, եթե անձը հանդիսանում է համատեղությամբ աշխատող կամ միաժամանակ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ, ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվելու է առանձին՝ յուրաքանչյուր գործատուի համար և տեղեկատվությունը հարկային մարմնի միջոցով փոխանցվելու է գործատուներին, իսկ մայրության նպաստի դեպքում, հաշվի առնելով բոլոր գործատուների մոտ ունեցած եկամուտը Միասնական սոցիալական ծառայության կողմից նշանակվելու և վճարվելու է մեկ նպաստ:

Այդուհանդերձ, Նախագծերի փաթեթի վերաբերյալ, սոցիալական հիմնախնդիրների տեսանկյունից, «Ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի վերաբերյալ կցանկանալիք ներկայացնել հետևյալ նկատառումները: Մասնավորապես.

Նախագծով առաջարկվում է ժամանակավոր անաշխատունակության նպաստը նույնպես հաշվարկել օրացուցային օրերով՝ առաջին 7 օրացուցային օրվա (գործող՝ 5 աշխատանքային օրվա փոխարեն) համար՝ գործատուի միջոցներից, իսկ մնացած ժամանակահատվածը՝ պետական բյուջեի միջոցներից: Կարծում ենք, սոցիալական տեսանկյունից վարձու աշխատողների համար դրական է, որ ավելանում է փոխհատուցման ենթակա օրերի թիվը՝ դրանում ընդգրկելով ոչ աշխատանքային օրերը: Սակայն, հաշվի առնելով այն հանգամանքը, որ նպաստի չափի հաշվարկելու համար նախատեսվում է հիմք ընդունվող մեծությունը բաժանել 30.4-ի (մեկ ամսվա միջին օրերի) վրա ներկայումս գործող

21-ի (մեկ ամսվա միջին աշխատանքային օրերի) փոխարեն, ապա կստացվի, որ, առաջարկվող Նախագծերի փաթեթի ընդունմամբ, որոշակի դեպքերում ժամանակավոր անաշխատունակության հետևանքով փոխհատուցման ենթակա գումարը *կնվազի* (եթե դրանում ներառված լինեն միայն աշխատանքային օրեր):

Եզրահանգում

Նախագծերի փաթեթի ընդունման դեպքում, հեղինակն ակնկալում է, որ կբարելավվի ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստների նշանակման գործընթացը և կապահովվի հասցեականությունը՝ էլեկտրոնային առողջապահության համակարգի տվյալների հիման վրա նպաստը կնշանակի և կվճարի Միասնական սոցիալական ծառայությունը:

Նախագծերի փաթեթով առաջարկվող լրացումների և փոփոխությունների ընդունումը սոցիալական հիմնախնդիրների տեսանկյունից կունենա բացասական ազդեցություն:

Նախագծերի փաթեթը սոցիալ, կրթական, առողջապահական հիմնախնդիրների տեսանկյունից լրամշակման կարիք ունի:

ՓՈՐՉԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

ՍՈՑԻԱԼ, ԿՐԹԱԿԱՆ, ԱՌՈՂՋԱՊԱՀԱԿԱՆ

ՓՈՐՉԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՊԵՏ

Լ. Մարկոսյան

Կատարող՝ Ա. Գալստյան (հեռ. 011-513-235), (12-35)

13.01.2025թ.